



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4590

33  
87



~~83-31~~  
C-~~87~~

1920 ՕՍՏ 2088

# ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ

ԱՆՆԻ  
Կ. Ա. Մ

ՊԵՏՐՈՍԻ ՃՈՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՎԻ ՃՈԳՈՆԻԱՑ.

Գ Ա Ր Տ

## ՕՇԱԿԱՐ ՇՈՒԳԳԵԱՅՔ

Թարգմանութիւն

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍՈՒԼԻՇԱՆԵԱՅՑ.

Յօդու Տանկառանից Անդրեվկաս գաղթած կարօտեալ  
հայ բնուանիքների:

— ՀԱՅԱՍՏԱՆ —

Կ ա պ ա ր ա ն ի Յ ո վ ա ն ն ի ս ի Ռ ա յ ս ա ն ե ա ն ա ց :

1878

03 AUG 2005  
1929

83.  
T-87

# ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ

Կ. Ա. Մ

ՊԵՏՐՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԵՊԻ ՃԱՊՈՆԻԱՑ.



## ՕՇԱԿԱՐ ՇՈՒՊՊԵԱՑԻ

Թարգմանութիւն

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍՈՒԼԻԽԱՆԵԱՑ.

Յօդուտ Տաճկաստանից Անդրկովկաս զաղթած կարօտեալ  
հայ ընտանիքների:

Տ Ժ Ի Ա  
Տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց:  
1878

15.07.2013 0UA 80

## ԱՐԵՎԱ ՏԱՐՎԸ

三

• ፳፻፲፭ ዓ.ም. ከዚህ ማረጋገጫውን በፊት ተስተካክለዋል፡፡

3 2 4

Дозволено цензурою. Тифлисъ, 9 Декабря 1887 года.

Digitized by srujanika@gmail.com

Digitized by srujanika@gmail.com

յանուար օսման սալիմփերմ լիճառայինչ ուսութ  
լիճառինադ բա

Типографія Мартиросіанца, на Орбеліановській вулиці, д. № 5.

8581

## Եւր ազնիւ

ԱՀԳԱԿԱՆ

## ՄԻԱՍ ՍՈՒԼԻՎԱՆԵԱՆՑԻՆ

ԵՐԱԽՏԱԳԵՏ ԱՐՏՈՎ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

T H E

Φωρηματίριο:

Մեր հայրենակից գաղթական ընտանիքների  
դառն վիճակը՝ ամեն հայ մարդու սիրտը շարժեց:  
Ամենքը, անտղորմ քրդերի սրերից ազատուած, այդ  
մի խումբ թշուառների ճարակւող վէրքը տեսնելով  
շտապեցին իւրեանց առատ սպեղմնիքով թեթեաց-  
նել նոցա ցաւը: Ամենայն կողմից երեեցաւ մեծ ե-  
ռանդով նիւթական օժանդակութիւն: Երեեցան և  
այնպիսի ազգասէրներ, որոնք հրատարակելով զանա-  
ղան գեղեցիկ մանկական ընթերցանելի զբքեր՝ երկու  
օգուտ պատճառեցին. մէկ՝ որ այդ զբքերի օգուտը  
ընձայեցին գաղթականներին, միւսը՝ օգնեցին և մեր  
ազգի մանուկներին մոռաւոր կերպով: Աչքի տուած  
ունենալով այդ բոլոր ազգային բարեգործութիւնները,  
և լաւ համարեցի այդ վերջի խմբի ազգօգուտ գոր-  
ծը, որին և հետեւելով հրատարակեցի այս աշխա-  
տութիւնն:

Յուսով եմ, որ յարդելի քննադասները ներո-  
ղամիտ կ'լինին այս զբքի միջի զանցառութիւններին  
համարելով աշակերտական ժամերի առաջնապառուղ:

## ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ

Ա.

Ամառնային հիանալի ու պայծառ առաւտներից էին երկն էր: Ուշյնի վերայ լողում էր շոգենաւը: Տախտակամածի վերայ, փոած կտաւիների շուաքի տակ, երեք պատուինի էին նստած: Նրանց շրերի և աւելի գլխարկների ձեւից հեշտութեամբ իմացւում էր որ ուսանողներ էին: Երեքն էլ երեխայութիւնից սկըսած համար վերաբեր ուստի ամենամասն պատճեն էր այս անդամները: Ենթադրութիւնը այս անդամները ամենամասն էր այս անդամները: Ենթադրութիւնը այս անդամները ամենամասն էր այս անդամները: Ենթադրութիւնը այս անդամները ամենամասն էր այս անդամները:

— Ինչու ես տխուր, Բրունէ, յայտնիր մեզ քո վեշտդ (դարդ) առանց մի բան ծածկելու մեղանից, թէ ոչ արածդ ընկերութեան մէջ անվայել է, ասացին նրան միւս երկու ուսանողները:

Բըրունէն մի քանի երկար ու ձիգ բայց կցկտուք  
և անհասկանալի բառեր արտասանեց, սակայն իւր  
դեռաշխատ ընկերները անուշ մաերմութեամբ մօտե-  
նալով իրան, այնպէս խոր կարեկցութեամբ երեսը  
նայեցին, որ նա այլ ես իւր վեշտը չ'կարողացաւ  
թագինել նրանցից:

— Այսօր առաւօտեան ձագոնեայից ես մի նամակ  
ստացայ, ասաց նա, մայրս կատարեալ յուսահատու-  
թեան մէջ գրում է, որ իր մօտ վերադառնամ:

Վահանակի բովանդակութիւնը.

ԼՕԿԱԳԱՄԱ

Սիրելի բլունէ.

Ե՞հա 8 օր է, որ հայրդ տանից դաւրս է գնացել միայն յայտնի չէ թէ ուր, կարծես անդառնալի կերպով անյայտացել է. դանազան համբաւներ են լսվում. մի քանիսը ասում են՝ իր թէ ինքն իրան սպանել է. ուրիշներն էլ թէ, պարտաւելներից ազատուելու համար՝ իր հետ վերցվել է բաւականազափ դրամ ու փախել է: Բոլոր քաղաքը ասում է, չափ դրամ ու փախել է: Բոլոր քաղաքը այս անոր նա մնանկացել է. բայց ինձ թուում է թէ այս անկարելի բան է, եթէ Աստուած չ'անէ ծամարիս լինի, մեծ ամբախտութեան մէջ կրնկնենք: Մեր այսպիսի իշխանական զբութիւնը յանկարծ վայր ընկնի. և ուշ ուշի ձեռք անդնի, ո՛հ այդ շատ դառն կ'լինի: Ա՛յս

ինչո՞ւ դու ինձ մօտ չպէտք է լինիս իմ այս անօգ-  
նական թողուած միջցին. ուրիշ ոչ մի բարիս կա-  
մեցող խորհրդատու բարեկամ չանիմ: Ու ոքի վերայ  
չեմ կարող յոյս զնել շուտով հասիր ինձ, դու իմ  
միակ միխթարութիւնս. ահա ուղարկում եմ քեզ ճա-  
նապարհի ծախս: Եթէ չշտապես, շատ կարելի է յե-  
տոյ ինձ այլ ևս կենդանի չգտնես, այդ միայն Առ-  
տուծուն է յայտնի: Վիշտը ինձ հալում մաշնում է....  
Քեզ եմ յանձնում դաւակներս,.... Զօրպ վրէժն առ-  
իւր թշնամիներից.... Նս արսափում եմ (փշաքա-  
զուել): Համբուրում եմ քեզ բոյր պատովմ:

Фп. Мажи

## Մարեամ Մասոն:

Աամակը կարդալու ժամանակ, գտնն արտասուքի կաթիլները թափւում էին բըռնեի աչքերից և սրաի ցաւից բնկաւ ընկերների գիրսկը:

— Հեսց այսօր ճանապարհ կը լնկնեմ դէպի ծապո-  
նեայ հօրս գանելու և դուք եւ կ' գաք ինձ հետ։ Յա  
ձեզ երկուսիդ եւ կ' հարատացնեմ եթէ դուք համա-  
ձայնուեք ինձ այս բանում օդնելու։

—Ես շատ ցաւում եմ քեզ վերայ բրոնէ, ասաց  
մեծ ուսանողը, բայց չնայելով մեր սերտ բարեկա-  
մութեան, չեմ կարսղ քեզ հետ ձապոնեայ գնալ:  
Առաջին որ դու ունենալով մի ազատ և անկարօս  
դրսթիւն, իրաւոնք ունիս վասահանալու (ումբո-  
ղնել) քո ապագայիդ, իսկ ես մի խեց մարդ եմ և

մի բան վճռելու համար, առաջ պէտք է ինչպէս հարկն է լաւ մոտածեմ և երկրորդ՝ անշուշտ հարկաւոր է խորհուրդ ուղեմ ազգականերից, այնպէս որ այս բարեկիս չեմ կարող այդ ամենը մի կողմը թողնել և քո ետևիցդ դալ:

— Ամի՞ր Ալֆրէդ, ասաց միջահասակ ուսանողը, կարծեմ սա Ս. Գօնն է ուր բնակվում է իմ մօրս ազգականը, գնանք նրա մօտ:

— Ե, յո դա մեզ համար մի լաւ ու զուարձալի զըօսանք կ'լինի: Դէս էլ ի՞նչի ենք ուշանում, ժամանակ է, դուրս գանք ափը: Բարի ճանապարհ Բրունէ, յուսով եմ որ երբ կրկին վերադառնաս մեզ մօտ, դարձեալ նոյն բարեկամները կ'լինինք, դու ինքդ լաւ կիմանաս, որ մենք այս դէպքում ուրիշ կերպ չենք կարող վարուիլ քեզ հետ:

Ուսանողները իջան նաւից գնացին: Բրունէն ոչնչ չ'կարողացաւ պատասխանել: Նա ցնորուածի նման նստած էր. յետոյ երեսը ձեռներով ծածկեց և սկսաւ ցաւալի կերպով արտասուք թափել: Նա յոյս չունէր իւր ընկերների կողմից այնպիսի կոստութեան և սառնասրտութեան հանդիպելու, որ մինչև անգամ մի քաղցր, միիթարող խօսք էլ չ'ասացին:

Բրունէ Մատոնը ճապնեայի մի հարուստ վաճառականի մեծ որդին էր: Նրա հայրը սկսել էր իւր վաճառականութիւնը Ամերիկայում, յետոյ երբ հաղորդակցութիւն ունեցաւ ճապնեայի հետ ուղարկեց այնտեղ:

ամեն տեսակ ապրանքներով լի նաւեր, ուր շուտով ինքն էլ էլ ողջ ընտանիքով տեղափոխուեցաւ և բնակութեան կոկագամա քաղաքում: Այնտեղ նրա գործը այնպէս յաջողակ գնաց որ շուտով ահագին հարըստութեան տէր դարձաւ: Հէնց այս ժամանակն էլ մեծ որդին մեծացել էր և պէտք էր ուսման տալ: Հայրը նրան ուղարկեց Գերմանիայ և աշակերտութեան տուեց սկզբում Գերմանիայի յառաջադէմ ուսումնարաններից մէկի մէջ, որտեղից յետոյ համալսարան մտաւ: Ընկերները սկզբում ծաղրում էին նրա գանդաղաշարժութեան վերայ, բայց երբ նկատեցին որ նա մի բարի, խելօք և մանաւանդ հարուստ երիտասարդ է, իսկոյն ամենայն կողմից ընդունելութիւն ու սէր ցոյց տուին. իւրաքանչիւրը խոշով խօսելով կամենում էր նրան իւր կողմը գրաւել և հետը բարեկամանալ: Բրունէն թէւ փափուկ մեծացած և թոյլ բնաւորութեան տէր երիտասարդ էր, այնու ամենայնի առանց լաւ ճանաչելու չէր հաւատում ամենքին. մոերմացած էր միայն երկու ուսանողների Ալֆրէդի և Թոմասի հետ, որոնց համար իւր ունեցածից ոչ մի բան չէր ինսայում: Եւ ահա դրանք— այդ հաւատարիմ ընկերները բաժանուեցան նրանից թողնելով նրան անօգնական իւր աննսխանձելի դրութեան մէջ: Խեղճի սիրու այնպէս փշաքաղվում էր, որ կարծես թէ մի հրէշ մաս մաս էր անում նրան և ինքը մատածում էր թէ իւր ծնողաց դառ-

Նակակիծ ցաւերը չը տեսնելու համար՝ իրան միայն մի  
հնարք է մնում—այն է ինքնասպանութիւնը:

Յայտնի չէ որքան ժամանակ՝ նա այսպէս նառած  
էր, որ անտեսը մօտեցաւ նրան և հարցրեց, թէ  
նրան ոչ մի բան հարփաւոր չէ:

Բրունէն կարմրեցաւ, որովհեաւ շփոթութեանը  
մէջ մարփիցը այնպէս անցաւ՝ իր թէ մնածածն ան-  
դամ կարելի է եղել լսել: Մի շեշ գարեջուր ինզրեց  
և շետոյ ուշադրութիւնը գարձրեց դէպէ բազմու-  
թիւնը, որ բոպէ առ բոպէ շատանում էր նաև վերայ:

Լ ոնշաէյնում շողենսաւի տախտակամածը բարձ-  
րացան մի քանի մարդիկ ևս, որոնք շտապով գնա-  
ցին ամենաիժան տեղը և մեծ խողովակի ետելը ե-  
ղած մնութենելի վերայ՝ միմեանց թիկն տուած նրա-  
տեցին: Այդ ժամանակ լսուեցաւ երշեկի (ռալբաշ),  
պանիրի և զինու հոռ: Բրունէն մինչ այն տատիճան  
ընկած էր մտածմանց մէջ, որ ոչինչ չէր նիստում  
մինչեւ անդամ և այն՝ թէ ինչպէս երեխայքը իրան  
շրջապատած հետաքրքրութեամբ նայում էին իրան շո-  
րերի և գրեանց վերայ:

Բազմութիւնը գնում էր Ամերիկա բազզառո-  
րուելու: Մի քանիները այլ ևս չին կարողանում  
երկար մնալ իրանց հայրենիքում, որովհետեւ իւրեանց

խարեւայտթեամբ, զալութեամբ և անհաւասարմու-  
թեամբ, միշտ հալածանքի մէջ էին: Միւաներն էլ  
Գերմանիայում իւրեանց համար գործ չ'գտնելով գնում  
էին օտար երկիներ փող աշխատելու: Կային և այն-  
պիսիները որ ազատութիւն և արդարութիւն էին ո-  
րոնում, մոռանալով որ հէնց իրանք են ուրիշներին  
Ճնշողը և զրկողը:

Վեճնքը ժողոված իրանց վերջին կոպէկները՝  
ողջ գերդաստանով շուռում էին հեռաւոր երկիրը:

Կորլենցում շոգենաւը մտաւ մի բարձրահասակ,  
լայնաթիկոնք և տգեղ դէմքով գիւղացի: Նրա կողը  
կանգնած էր մի բարձրահասակ բարակ բարակ  
մատաղահաս երիտասարդ:

— Իսկ այդ երիտասարդին ուր ես տանում, հարց-  
րեց գիւղացուն մի նաւորդ:

Գիւղացին ճակատի քրտինքը սրբելով պա-  
տասխանեց. մաս ինձ այնպէս է զզուեցրել որ հո-  
գուս է հասցրել շատ ստիպեցի նրան, որ մի գոր-  
ծով պարապի, բանջարանոցապահ (բոստանչի) և հո-  
վեւ կարգեցի, հրամայեցի որ գնայ ձիսնց պահպանի  
և լողացնի, բայց նա տմենայն տեղից փախաւ, չէր  
կատարում պատուերներս և նստած միշտ քրքրում  
էր մի որևիցէ պատուած կամ հնամաշ գիրք: Ուստի  
կամենում եմ ուղարկել Ամերիկա, գուցէ մի մարդ  
գտոնայ այնտեղ:

— Թէկուզ որտեղ էլ դուք ինձ տալու և ուղար-

կելու լինէք, ինձ համար միւնոյն է, ամենայն տեղ կ'փախեմ:

—Գոնէ այս մարդկերանցից էլ է մի ամանշես, աշղաղեց գիւղացին և մի այնպիսի սաստիկ ապտակ տուեց, որ նա տեղումը մի քանի ըստի ձոճուեցաւ ինչպէս մի ճրկուն, կակուլ եղենի սաստիկ քամու ժամանակ:

—Հեռացէք ինձանից, գոչեց երիտասարդը, եթէ ոչ էլ չեմ նայել որ դու իմ հօրեղայրն ես: Քո այդպիսի կոպիտ վարմունքին ես բաւականին համբերել եմ, չեմ կամենում որ ինձ հետ վարուխ ինչպէս մի անսառնի հետ:

Եյդ աղաղակից բոլոր նաւորդները վազելով շրջապատեցին երկու գիւղացիներին:

—Եյդ ինչ աղաղակ է, գոչեց նաւապետը, երեխթէ դուք չէք հասկանում, որ այստեղ ոչ տօնավաճառ է և ոչ փողոց, եթէ չէք լոիլ իսկոյն ափը մեր կ'բերեմ:

—Պարոն նաւապետ, ասաց գիւղացին, գուք ինքներդ դատէք, այս անզգամը խանդարումէ մեծերի խօսակցութիւնը, ուրեմն իրաւոնք չունի՞մ տրամականջներիցը բոնել և դուրս ձգել: Մէկ նայեցէք ի՞նչ է նմանում սա: Բաւական ժամանակ ես և մեր ընկերութիւնը դայեմակի պէս դրան պահպանել և կերակրել ենք: Մենք վճռել ենք դրան ուղարկել Ամերիկա, որ այնտեղ ինչ գործ հաւանումէ նորանով պարապի:

—Բայց ես չեմ կամենում, որ ընկերութիւնը աքսորէր ինձ Ամերիկա, ինչպէս մի վնասակար մարդու, պատասխանեց երիտասարդը, շատ կարելի է ես ինքս եմ կամենում չարագործ և անսարդալ մարդկերանցից աղաղուելու համար գնալ այնտեղ: Բայց ոչ ոք չի կարող ինձ իմ Հայրենիքից աքսորել: Ասուած չէ թոյլ տալիս, որ իսեղջ որբերի հետ այդպէս վարուեն: Իմ սիրոս այդպէս բաների չի համբերիլ:

—Տեսէք ինչեր է ասում լաւ, եթէ քո սիրաբ այդպէս բաների չի համբերիլ բայց կ'կամենար, որ ընկերութիւնը քեզ կերակրի, հազյնի և կրթի: Ինչ ոչ դու այնպէս չ'վարուեցար ինչպէս հարկն էր, բոլոր տէրերիցդ փախար և մերջապէս կորցրիր այն ողջ հօար (սիւրու) որ յանձնել էինք քեզ արածեցնելու: Ես ձեզ կ'պատմեմ թէ այս ինչպէս պատահեցաւ. լաւ լսեցէք, շատ հետաքրքրելի է:

Յայտնի չէ թէ որակելից դա մի ասպետական վեպ էր եր ձեռք բերել որր իրան բալորովին խելքից հանեց: Մեր անսարդից մի փոքր հեռու գտնուում է մի կիսաւերակ աշապահ (պուրճ): Իմ Պետրոսը հետաքրքրուեցաւ իմանալ թէ ինչ կայ աշտարակի ներար: Ոչ մի դուռ չ'գնելով նա կատուի պէս սողաց պատի վրայով մինչեւ թնդանօթի պատուհանը, յետոյ սողաց միւս կողմը և թռաւ ներտ: Աշտարակի ներսը, ինչպէս և դուրսը ծածկուած էր կանաչ խոտով ու թփերով: Աշտարակում կար մի ստորերկրեայ ճանա-

պարհ: Նա 'նայեց ծակը բայց ոչ մի սանդուխտ չ'տեսաւ: Յետոյ կամեցաւ աշտարակից գուրս գալ բայց ճանապարհ չ'գտաւ, փորձեց ներսից վեր քաշուելով աղատուել, բայց նոյնպէս անյաջող գտնուեցաւ: Յետոյ հետաքըրթուեցաւ իմանալ թէ այն ինչ ստորերկրեայ ճանապարհ է: Մի հաստ փայտ տաշեց և գրեց ծակի բերանին և միւս ծայրը իւր գոտուն սկսաւ ցած իջնել: Մինչև յատակը գեռ շատ ճանապարհ կար, բայց նա էլ երկար չ'մոտածելով ձեռները բաց թողեց ու մէջն ընկաւ, չնայելով, որ տասը ոտնաշափ գեռ ևս մնում էր: Վայր էր ընկել գերեզմանի նման մի խոնաւ ու մուժ փոսի մէջ:

Վզատուելու ոչ մի յոյս չկար, ոչ ոք չ'գիտէր նրա աշտարակում լինելը և թէկուզ որ օգնութիւն էլ կանչէր—ով կ'լսէր: Գիշերը շուտով վրա հասաւ, կովերը չ'վերադարձան տուն: Անշուր է Պետրոսը իր հօտով: Գիւղացիքը հարցնում էին միմեանց: Ամենքը յուսահատուեցան, որովհետեւ ոչ ոք չըգիտէր թէ Պետրոսը հօար որ տեղ է տարել արածեցնելու: Գիւղացիքը լապտերները (Փանար) ձեռքերին որոշում էին: Վերջապէս այստեղից այնտեղից երեւեցան կովերը: Պառաւ խելօք կենդանիքը իրանք գտել էին տան ճանապարհը: Բայց գիւղացիներից շատերը երկու օրով փնտուում էին իրանց կենդանիներին:

Միւս առաւօտը Պետրոսի քոյրը հրաւիրեց ինձ

Իր մօտ: Նա երկու տարով փոքր է եղօրիցը. շատ հիւանդու և թօյլ աղջիկ է, այնպէս որ միշտ նրան սենեակումը մէնակ նստած կարելի է դանել: «Հօրեղբայր, ասաց նա ինձ, Պետրոսը չէ փախել, նա առանց ինձ հրաժարական տալու չի գնալ, կարծիքս հաստատ է. որոնի՞ր նրան աշտարակում, անգատձառ այնտեղ կ'լինի, որովհետեւ նրա վրայ միշտ խօսում էր և մինչև անգամ այս վերջին օրերս: Բայց ես վախենում եմ, որ չինի թէ մի ամբախտութիւն պատհած լինի նրան»:

Անք դնացինք աշտարակը և արդարե այնտեղ էր: Նատ գժուարութեամբ նրան գրից հանեցինք: Նա իսկոյն ուտել և խմել խնդրեց: Նս նրան երիմու ապտակ տուի և ոչինչ չ'թօյլ տուի տալ, բացի սկ հացից ու ջրից: Այնուհետեւ նրան էլ հովիս ըսկարգեցին. Ի՞նչ պէտք էր արած: Ընկերութիւնը վըձռեց ուղարկել Ամերիկա: Այժմ մեր գիւղում նա էլ չի կարող ձրի ապրել, ուրեմն ասածներս կատարեցինք. Ամերիկա գնալու ճանապարհի ծալար հաւաքեցինք, հազցրինք Պետրոսին և բերանք շոգենաւը: Նա չէր կամենում գալ և ընդդիմանում էր, ուստի ձեռները և ոտները կապեցին, բայց ես խղճալով կտրեցի թուկը և հրեցի նրան շոգենաւի տախտակամածը . . . Դատեցէք ինքներդ արդար եմ ես... Գիւղացին հպարտութեամբ նայեց շրջապատողներին սպասելով որ ամենքն էլ արդարացնեն իրան:

— Ճշմարիտ է, ես մի կամսապաշտ ու վայրենի եւ բեխայ էի, բայց սրանում ընկերութիւնը և իմ ազգականներս են մեղաւոր: Նրանք ինձ այշուհետեւ թոյլ տուին և իրանց յոյսը ճակատագրի վերայ դրին, Միլնոյն ժամանակ աշխատում էին, որքան կարելի է էժան նատեցնեն իմ կրթութիւն:

Իմ ծնողքը վաղուց է որ մեռած են: Նրանք շատ խեղձ էին բայց ազնիւ ու աշխատասէր: Ասում են, առաջնրանք շատ հարուստ են եղել, բայց նրանց սնանառաջը շարադաս հօրեղբայրս և փախել է կացրել է իմ հարազատ հօրեղբայրս և փախել է Ամերիկա: Թէ ինչ եղաւ նա՝ այդ չգիտեմ: Ես տասերկու տարեկան էի իսկ քոյրս տասը՝ երբ մեր որբութիւնը կատարեալ եղաւ: Մօրս թաղումից յետոյ մեզ գատաստան կանչեցին և յայտնեցին, որ այն օրից սկսած մեր տմենայն պիտոյքը պէտք է ընկերութիւնը հոգայ: Իմ խեղձ հիւանդու քրոջ տուին մի բարի այրի կնոջ, որը իւր հարազատ աղջկայ պէս սիրում է ու կրթում: Աստուած նրան այդ պէս սիրում է ու կրթում: Աստուած նրան այդ պարեկործութեան համար կը վարձատրէ: Իսկ իմ պարագործութեան համար կը վարձատրէ: Աստուած ըստու կամեցաւ ինձ մի հասարակ մշակ դարձնել բայց ես՝ նայելով իմ կերած ծեծիս և ինձ հետ վաս վարուելուն՝ չկամեցայ նրան հնագունդել ստիպուած էի փախել եթէ նրա բարի և համեստ կինը ասրդելէր ինձ: Թէ ինչ էր պատճառը, որ ես չէի կարողանում մնալ իմ տիրոջ մօտ, այդ ես ձեզ չեմ պատճառ մի լնկերութիւնը տեսնում էր թէ ես ինչ

նեղութեան մէջ էի և վերջապէս խղճաց. երբ ժամանակը լրացաւ ինձ տուին մի ուրիշ ափրոջ. ես կամենում էի զբագիր լինել բայց տուին դերձակի: Այս տեղ ես պարտական էի երեխաներին պահպանել, բարերի վերայ հսկել և կովերը կթել: Այս պաշտօնը ինձ համար անտանելի էր, ուստի փախայ նրա մօախց: Ինձ տուին կոշկակարի բայց նա բոլորից էլ անցաւ: Նա ինձ չափականց բանեցնում էլը, իսկ ինքը միշտ հարբում էր և տուն գառնալիս սկսում էր ծեծել իւր կնոջ ու երեխայոց: Ես նրկար չը կարողանալով դիմանալ այդ անհջանիքին՝ նրանից էլ փախայ: Ընկերութիւնը մտածելով, որ ես մարդ գառնող չեմ, հովեւ շինեց: Ես մեծ ուրախութեամբ արածեցնում էի ինձ յանձնած հօտը և որովհետեւ բաւականի ազատ ժամանակ ունէի, կամեցածիս չափ կարող էի զիրք կարգալ և սովորել: Ես շատ ուրախ էի աշխատել և վճարել իմ պահպանութեանս վերայ զործ դրուած վերջին կոպէկն անգամ:

Բայց զիտէ՞ք թէ ով ինձ ընկերութեան աչքից գցեց և գատաստանի ենթարկեց, որ ինձ ինչպէս մի անպէտք առարկայ շոգենափ մէջ նստացնէին և Ամերիկա զըկէին: Իմ հարազատ հօրեղբայրս, բայց զիտէ՞ք ինչու, որովհետեւ նա ափսոսում է ինձ մի գլու անգամ տալու: Բայց նա այնքան աղքատ չէ որ չկարողանայ ինձ պահպանել: ոչ նա ունի յիսուն հազար տակէր (մօտաւորապէս մէկ մանէթ է), և մի երեխայ:

Օմագլուն ամօթով լրուած թիկն տուեց աթոռ  
ոխն և ինքն իրան փսխում էր: Բաղմութիւնը  
հազար ու մի կողմից նրան ծաղը անելով դուրս  
դնաց: «Անչ գեղեցիկ երիտասարդ է, ինչպիսի ձար-  
տարութեամբ նա խօսում է, բայց եթէ նա կործ,  
ոչ որքան ափսոս է»: Այսպէս էին խօսում շրջապա-  
տողները, բայց ոչ մէկը նրանցից բարեկամնկան կիր-  
պով ձեռք չմեկնեց նրան: Նաւաստիները և անտեսը  
շրջապատեցին նրան և առաջարկեցին որ իրանց հետ  
մի բաժակ գարեջուր խմի: Պետրոսը շնորհակալու-  
թեամբ հրաժարուեցաւ խմելուց: Նա երկայն նաստա-  
րանի վերայ նաստած նայում էր ջուրը, գառն արտա-  
սուքի կաթիւննոր կաթիսթում էին նրա աչքերից:  
Պետրոսին թողնելով մենակ՝ ամենքն էլ հոռացան:  
Աստորդներից մեծ մասը քնեցին: Մինչ նա  
տիսուր նառած էր, մէկը ետեւից նրա ուսին խփեց.  
Նա շուռ եկաւ. կողքին կանգնած էր Բրունէն:

— Ասի՞ր Պետրոս, ասայ նրան Բրունէն քաղց-  
րութեամբ, քո ասածիցդ երեսում է, որ կամենում  
ես գնալ Սմերիկա: Ես քեզ ինձ հետ կվերցնեմ,  
գնանք միասին ճապոնեա: Դու ազնիւ և շնորհալի  
երիտասարդ ես և կարող ես ինձ հարկաւոր գալ:  
Գնանք միասին հեռաւոր երկիրը. նախ քան համա-  
գնանք միասին ճապոնեա երկիրը. նախ քան համա-  
գնանք միասին ճապոնեա երկիրը: Բրունէն մեկնեց իւր  
ձեռքը, բայց Պետրոսը ոչ:

— Դուք մի ազնիւ պարոն էք, ասաց Պետրոսը,

ձեր կամքը կտտարելու համար պատրաստ էի գնալու  
աշխարհիս ծայրը: Ոչոք ինձ չէ կարող արգություն: Բայց  
ես չեմ համարձակվում իմ քրոջս անպաշտապան թողնել:  
ես երգուել եմ իմ մօրա՝ մահուան մահանի մօտ,  
որ նրա մահից յետ թողնել նրան անտեր:

Բրունէն գունաստած թիկն տուեց աթոռուին:  
Պետրոսը երկար ժամանակ նայում էր նրան. նա  
շատ ցաւեցաւ որ արտօնցըրեց մէ այնպիսի բարի  
պարոնի:

— Ասեցէք, ասայ նրան Պետրոսը, ես կ'գնամ գիւղը  
և կ'սպասեմ իմ քրոջս. տեսնեմ սրա մասին նա  
ինչ խորհուրդ կ'այց: Եթէ այս պայմանով կ'համա-  
ձայնուէք կ'գամ քեզ հետ ճապանեա:

— Ահա, առ այս փողերը, պատասխանեց Բրունէն  
ուրախացած. գնա հայրենիքդ—քո քրոջ մօտ: Ես  
քեզ կ'սպասեմ Պոտէրլիդամում, մնաս բարեւաւ:

— Ո՛չ, ինչպէս ուրախ եմ գնալ մի անսահման և  
հեռաւոր երկիր, բարձր աղազակեց Պետրոսը, այնպէս  
որ նաւորդներից շատերը զարհուրելով վեց թռան,  
կարծելով թէ շղենաւը այրում է:

Պերձակայ նաւահամգստում Պետրոսը նասեց մի  
նաւ ու ճանապարհ ընկաւ գէպի իւր հայրենիքը՝  
Ըսկերութիւնը ավատութիւն տուեց նրան գնալ հե-

ռաւոր երկիրը և այնպէս յօժարութեամբ՝ որ Պետրոսը  
իւր բոլոր փողերը նուիրեց ընկերութեան առանց մի  
որ և է պահանջողութեան; Պետրոսի քոյլն էլ արգելք  
չեղաւ. թէև շատ գծուար էր նրա համար բաժա-  
նուել իւր սիրելի եղբօրից՝ բայց չկամեցաւ նրա բաղ-  
դաւորութեանը արգելք լինել: «Ի՞այց չէ՞ որ դու եր-  
դուել ես իմ մօրս՝ ինձ անօդնական չը թողնել. այս-  
ինքն խոստայել ես որ ամենայն պիտոյքս կհոգաս.  
բայց միթէ նրա համար չես գնում ձափոնեա՞ որ մի  
կատարեալ մարդ դառնաս և ինձ ես բազգաւորաց-  
նեա:

Պետրոսը տրամավթեամբ համբռքեց իւր քըզջը  
և շտապեց գնալ Ռոտուհրդամ ուր Բրունէն ապաստմ  
էր նրան։ Նա հաղցրեց Պետրոսին այնպիսի գեղեցիկ  
ու զարդարուն շրեր, որ տեմնողը շատ գժուարու-  
թեամբ կճանաչէր նրանում առաջուայ խեզք, գծու-  
տած շրերով Պետրոսին։

Ճանապարհին Պետրոսը կամենում էր Բրունէի  
ծառան լինել:

— Ա՛յ, զու իմ եղբայրս ես, պատասխանեց Նրան  
Քրոննէն, Սասուած գիտէ, թէ ես կարող եմ ես ծա-  
ռայի տէր գառնալ կամ թէ ինքս չեմ լինելու նոյն  
իսկ ծառայ կամ մշակ:

A circular blue ink stamp. The outer ring contains the text "УССР. ГІЛЬДІЯ ПУБЛІЧНОЇ БІБЛІОТЕКИ" at the top and "МІНІСТЕРСТВА ЗДРАВООХРАНИ" at the bottom. The center of the stamp contains the date "17.IX.1922".

Պետրոսը չէր կամենուի հպանդի մօտ գնայ  
մի սեղան նստած հաց ու աելաք պահու դիւլա-  
ցի եմ, ասում էր նա, իսկ դուք ուսում առած մի  
ազնուական էք, ուսաի ամօթէ միշտ քո մօադ մնայ:

—Պետրոս, ես ասում եմ քեզ, որ դու իմ բարե-  
կամա ես և իմ բոլոր ունիցածը քեզ էլ է պատկա-  
նում: Դու միշտ թէ զիշեր և թէ ցերեկ ինձ մօտ  
պէտք է լինես:

Սի քաղաքակրթուած ընկերութեան մէջ զբու-  
նուիլը, Պետրոսին նախ շատ խորիթ էր թւում, նա  
մանաւանդ՝, որ ամենքը չոյանդերէն էին լո-  
սում, բայց Քրունէն նրան այդ գժուաբութիւնիցն  
էլ ազատեց: Նա միշտ Պետրոսին իր մօտ էր պահում,  
ամենայն բան ցցց էր տալիս, բացարում և սո-  
վորդնում:

Պետքոսի համար բոլորը նոր էր. նա երբէք չէր  
տեսել մի այնպիսի մեծ և խիստ լայն ջուր, որ միշտ  
տատանուելիս լինէր կանաչ կապոյտ ալիքներով. ոչ  
այնպիսի մեծ նաև, որի աախտակամածի վերայ իւ-  
րեանց գիւղը կ'տեղաւորուէր:

Պետքուին բողոքը գուր եկաւ, բայց աւելի հետաքրքրուեցաւ Նստասատիների կայմերի վերայ մազը լշտումը (սողալը): Նա զարմանում էր նոցա քաջարութեան և աներկիւզութեան վերայ, մինչև անզամ ալէկոծութեան ժամանակ: Շուտով ինքն էլ տովորեց արձանալ այդ վտանդաւոր ատնգուղեավագ բայց

յեռց Բրունէի խնդրիքին հնազանդուելով՝ հրաժառակացաւ այս երկիրալի հաճոյքից:

Այսու ամենայնի Պետրոսը չ'կարողացաւ իրան բռորովին զագել և միանգամ կայմի վելայ բարձրացաւ առանելու թէ նաւի ցռուքը (քիթը) ի՞նչպէս է զօլել ալեքները կարում: Բրունէն երկիւղով մինչև երեկոյ որոնում էր նրան և շատ ուրախացաւ երբ կրկին յետ դարձաւ: Նաւը որքան գէպի հարաւ էր գնում բնութիւնը այնքան զուարթանում ու գեղեցկանում էր: Յերեկը, պարզ եղանակին, ծովի ջուրը այնքան պարզ ու թափանցիկ էր լինում որ այն անվերջ խորութեան մէջ ամեն բան առանւում էր: Զրի մէջ երբեմն դիմիներ էին խաղում, երբեմն ջրից թռչուտում էին ամբողջ երամներ ծիծեռ (թռչկուտղ) ձկների, երբեմն սոսկալի կէտ ձուկը ջրի արծաթաւ փայլ շերտերը վերե էր զցում, երբեմն երեւում էր շանաձկայ զարհուրելի բերանը, որ կարծեա թէ աղահութեամբ իր զոհին էր սպասում: Պետրոսը յափշտակվում էր ուրախութիւնից առանելով այդ բռը հրաշալիքները:

Պոտերգամից մինչև Բատաւեա նրանց ձանապարհորդութիւնը շատ յաջողակ եղաւ:

Բատաւեայում նրանք մի ուրիշ նաւ նստեցին, որը գնում էր ձապանեայի Լոկագամա քաղաքը: Սա մի վատ շինուած դանդաղաշարժ առևտրական նաւ էր: Նատերը նրանց խորհուրդ տուին, որ գնան

մի ուրիշ Սինդապոր գնացող նաւով և այնու վեց ապա Լոկա ամա գնան: Բայց Բրունէն չկարողացաւ համբերել, որովհետեւ շապում էր, որքան կարելի է շուտով հասնի իւր Հայրենիքը՝ իւր խեղձ և անօգնական մօր մօտ. ուստի առանց երկար մտածելու նաև Պետրոսի հետ առևտրական նաւը:

Պետրոսը ուրախութեամբ կ'մար Բատաւեայում, բայց չէր կամենում Բրունէին նեղացնել ազնաւոր մնալու սովորելով: Նա երկար ժամանակ նայում էր սքանչելի կղզուն մինչև որ վերջապէս այն էլ կորաւ հեռաւորութեան մէջ:

— Ես Պետրոս, այն գժոխիքին ինչ ափսոսում ես, ասաց նրան Բրունէն. ծանօթ չես դու այս կողուն: Ինչ ասես որ չկ գտնուի այնաեղ՝ այրեցնոլ աննդեր, խօնեայ և մրրիկներ, նոյնպէս և հազարաւոր կորդիլերուներ և վայրենի գազաններ:

— Պալոն Մասոն, պատմեցէք ինչ գիտէք ձապոնայի մասին, ես շատ եմ վախենում գնալ մի անձանօթ հեռաւոր երկիր:

— Ճարոննեան բաղկացած է բազմաթիւ կղզեներից, ասաց Բրունէն, նրանց ամենամեծերն են Նիֆօն, Սիկոզով և Կրոսիու: Ճարոննեայի գլխաւոր քաղաքը Իւգդոն է: Կլիման բարեխառն է և ոչ թէ այնպէս սաստիկ շոգ ինչպէս այստեղ. ոչ էլ այնպէս սաստիկ ցուրտ ինչպէս հիւսիսային երկիրներում: Այն և ներմ հստակը ողողելով արևելքան կողմում դրտ-

նուած կղզիները՝ նրանց կլիման բարեխասնեցնում է այնպէս՝ ինչպէս հովֆատրէմը նւրոպայի արևմտեան ափերը։ Աեռների շղթան անցնելով բոլոր կղզիների միջով, պաշտպանում է սաստիկ ֆլաստկար և ցուրտ քամիներից։

Ճապրնեան հարուստ է ամենայն տեսակ պտուղ ներով։ Ոչ մի տեղ չեմ տեսած այնպէս կանաչով ծածկուած այգիներ, ինչպէս ճապոնեայում։ Կամելեաների (բոյս) հիանալի անտառները, բամբուկների (եղեկնի նման բոյս է) թփերը և եղևնիների աշագին անտառները բոլոր ճանապարհորդներին հիացնում են։ բրինձը, և չայը (թէւ միջակ տեսակից) այստեղի ամենառատ բերքերն են։

Վայրենի գազաններ ճապոնեայում շատ քիչ են, նոյնպէս և ըստանի կաթնասրմն կենդանիներ։ Ոչսար բոլորովին չկայ։ Խոզերը բերել են տալիս ջինաստանից և միայն ծովեզրեայ բաղարի բնակիչները նրանց բազմացնում են նւրոպացւոց համար։ Առհասարակ ճապրնացց կերակուրն է ձու, թռնեղէն, ձուկն և ամենայն տեսակ կանաչը։ Նրանք կաժշեն զործածում։ Կով պահում են միայն երկրագործութեան և ծանրը բեռներ կրելու համար։

Ճապրնեայի կայորը կուլում է Միկացո, որ նրանում է Միակօ բաղադրում։

Ճապրնացիք կրապաշտ են։ Ողջ ժողովուրդը առհասարակ բաւականին կրթուած է։ ոնին ուսում

նարաններ, տպարաններ, լբագիմներ, նոյնպէս և ընթերցասէր են ամենափոքր դուքսներում անդամ վաճառվում են ձապոնական գրքեր։ Ամենքը կարգում են, թէ գինուրները, թէ շրջապահանները, թէ երկրագործները, թէ կանայքը և թէ երեխայքը։ Զեռագործութիւնը և քանդակագործութիւնը նոցա մէջ շատ կասարելագործուած է։

Դեռ մեզանում ոչ մի հասկացողութիւն չունէն ոչ կանոնաւոր փոստի և ոչ մի նամակի վերայ, ձապոննայիտմ կար նամակատուն և կանոնաւոր փոստ, ունէն գերեզմանատուն ուր պահպանվում էին գերեզմանական արձանագրութիւններով յիշատակարաններ։

Ճապրնեան նւրոպայից հեռու լինելու պատճառով՝ իրա լուսաւորութիւնը բոլորովին Զինաստանի նման ստացաւ։ Ճապրնեան երկար ժամանակ անծանօթ էր նւրոպացւոց։ Առաջ ճապոնեային մի առապելական երկիր էին ճանաչում և անուանում էին Ցիզանգօ։ Միջին դարերում գիտէին, որ այդ երկրում ուկի, արծաթ և թանկագին քարեր շատ են գտնվում։

Երբ Կոլոմբոսը յայանեց Ամերիկան, կարծեց որ նոյն խակ Ցիզանգօն է և հէնց այդ կարծիքի մէջ էլ մեռաւ։

Միայն Կոլոմբոսի մահից 37 տարի յետոյ նւրոպացիք գտան այժմեան ճապրնեան։ Մի Փորթուգալական նաւ միզիկներից քշուած ընկաւ ճապրնեայի

ավլ։ Փորձուգալացիք հաւատեցո՞ւ այս երկրին և  
նրա բնակաց, դրանք սկսեցին վաճառականութիւնը  
ամել նրանց հետ և զուրս բնիքն այստեղից չտա  
ռակի և արծաթ։ նոտ քարոզիչներ եկան ձաղոնեաց  
նրանց մեջ քրիստոնէութիւն առաջած ելու համար։ Նրեւ  
ելի եկուիթ մրանց Կառաւերեանը կարմացել է լի նրանց  
հիւրասիրութեան և հասկացողութեան վերաց։ Անձ  
մանը աղոթեն քրիստոնէութիւն էու ընդունել բայց  
քահանաները խռովնուելով իրանց շփրանքնեած բաւ  
ները, մէջ լանգուրման պատճառու եղան։ նապոնացիք  
ըստ կարողանալով այլ եւս համբերել սկսեցին քարու  
զիւների հետ կուռել ու հակածառել (յուջաթռւ  
թիւն ասել)։ Հոլմանդացիք, որ շատ առուել էին Փոր-  
թուգալացւոց, ձապնացոց հետ միանալով սկսեցին  
հալածել և սնագումանել անգժութեամբ վարուել  
նրանց հետ։ Արմանած ջառ ։ բայց պարունակութիւնը ի հօս  
— Եսացէք ձեր հաւատակիցներին, ձաղոնացիք  
առում էին Փորթուգալացւոց, որ ոչ ոք համարձակուի  
գալ մեր կողմը։ Մինչեւ անդամ եթէ ձեր կայսրն էլ  
գալու լինի, իսկոյն մենք կ'արտաքսենք, թէիւզ ոգա-  
քը լատանեաների Աստուածն էլ լինի։

Հոլմանդացիք իրանց խրամանկութեամբ ձգւ  
պահացիների հետ բարեկամացան և փառի առ փաքի  
վաճառականութիւնը իրանց ձեռքը ձգեցին։ Նրանք  
խաբում էին թէ իրանք քրիստոնեաց չեն։ Վայրաց  
Ասիմբարի կղզում Փորթուգալացիք հաւաքնացին

երանց վելացն ցմբել պատշաճական 30,000 պա-  
տերազմնաց ձապինացիք և կարողանարով առնել այն  
կղզին՝ Հոլմանդացւոց օգնութիւն կանցքին, սրոնք ի-  
րանց նաւատարակով դարձ՝ Կահմբարի պարիսպները  
քարութանդ արին թնդանօթներով։ Բոլոր քրիստո-  
նանիւրը ունեցան և ձարգութեան բոլորովին փակուե-  
ցաւ Եւրոպացւոց համար, բացառութեամբ Հոլման-  
դացիներին, որոնք իւրեանց օգնութեան համար  
սպազի սուսացան ձապնացիներից մի փոքրիկ կղզի  
նազասակի նաև անդստով ուր Հոլմանդացիք հիմ-  
նեցին դազթականութիւն և տարենք երկու նաև Եւ-  
րոպացից ուղարկում էին սյնանդ ձապնացիք նրանց  
հետ էլ փառ վարուեցան, բայց նրանք երկիւղեց չէին  
կարողանում տրտնջալ։

Եսացէս ձապնեան երկար ժամանակ անծա-  
նօթ մնաց Եւրոպային։ Անգղիացիք և Եւրոպական  
տէրութիւններից շատերը նրանց հետ զանգան աւ-  
ուերական պայմաններ էին կամենում կապել բայց  
ձապնացիք քաղաքավարութեամբ ամենայն բան մեր-  
ժում էին և ոչ որին թոյլ չին տալիս իրանց քա-  
ղաքները մտնելու։ Վերջապէս մի ազնիւ Ամերիկացին  
Պէրրի անուամբ, կարողացաւ նրանց կամակորութեանց  
յաղթել։

Նա տեղաւորել էր իւր առևտրական նաւե-  
րում թնդանօթներ և երբ ձապնացիք իւր առա-  
ջարկած պայմաններից ոչ մէկը չին ընդունում իսկոյն

Հրամայում էր թնդանօթները արձակել: Ճապոնացիք  
չկարողացան այլ ևս ընդդիմանալ և 1854 թուին  
թոյլ տուին Ամերիկացւոց նաւերին մոնել Յ նաւաշ  
համարիստ: Ահա այդ ժամանակից բոլոր եվրոպացիք  
ները կարողացան ազատ մոնել ճապոնեացի խորքը  
և ունենալ առևտրական հաղորդակցութիւն ճառու-  
նացիների հետ:

Բայց բնիկները մինչև այժմ էլ օտար ազգերի հետ սիրով չեն, թէև ձապոնեայի կայսերութիւնը սկսած այժմեան Միկադօից աշխատում է ամենայն ուժով՝ որ ձապոնեան հաւասարեցնի նեղոպայի քաղաքակրթուած ազգերի հետ:

Ուկաղամաքաղաքը, ուր բնակվումէ իմ հայրս,  
Պէլրի ժամանեակ ոչ այլ ինչ եթէ ոչ մի ձահճճ  
բայց այժմ կարծես մի ծաղկազարդ և կանաչ այգի  
լինի: Ահա բոլորը ինչ գիտեմ ձապոնեայի մասին, իսկ  
նորա մանրամասնութիւնների հետ այնուեղ կ'ծանո-  
թանաս:

Արանց ճանապարհորդութիւնը Բատակացից մինչ-  
ք և Լոկագամա աւելի երկար էր երևում, քան նրա-  
պայից Բատակեա. վեց շաբաթից յետոյ Հորիզոնի  
վիրայ երեսցաւ ձապնեայի ափը: Նաւաստիքը ու-  
րախութեամբ ծափահարեցին, բայց ճանապարհոր-  
դութիւնը դեռ չէր վերջացել:—

առաջի քննութեան ըստ պահանջման ու մասնակիութեան ըստ  
պահանջման առաջի առաջ պահանջման մէջ առաջ պահանջ-

Իրիկունը վրայ հասաւ: Հորիզոնի վերայ երեւ-  
եցան խաւար ամպեր: Խտապետը ախուր նայելով  
երկնքին՝ մի քանի նշաներից կարողացաւ գուշակել  
փոթորկի մօտիկ լինելու: Եւ արդարեւ երկնքը ծած-  
կուեցաւ մութը ամպերով: Այնպիսի խաւար զիւելը  
էր, որ եթէ մոտոք մարդու աչք կուտէիր, չեր տես-  
նիլ: Նաւագետը և համարեած բոլոր նաւաստիքը  
կանանած՝ սպասում էին մրրկին: Յանկարծ վեր կացաւ  
սաստիկ քամի և նրանք ամենքն ել քաջութեամբ զէմ  
կացան, այնպէս որ կացինները ձեռքերին կանգնած  
էին, որպէս զի հարկաւոր եղած, ժամանակ կամ  
կայմը կամ մակոյի վրայի թոկերը կարտեն:

Բրունէն և Պետրոսը իրանց անկողնում հանգիստ քնած էին առանց խմանալու թէ ինչ էր պատահում ծովի վերայ: Լուսանալու վրայ էր, երբ նրանք արթնացան խառն աղաղակներից: Զուրը ցայթքում էր նրանց մահճակալների վերայ, դոնք օրօր վուր և զանազան կողմեր էին ընկնում: Ամենայն բան ցրուած էր ջրով ծածկուած յառակի վերայ: Նաւը ձարձատվում էր (չորթ չորթալ). կարծես թէ կատաղած ալիքները նրան շուտով պէտք է խորսուածին: Բրունէն և Պետրոսը զարհուանքով վեր թռանք նրանք գժուարութեամբ գտան դէս ու դէն ընկած շորեր և ինչպէս պատահեց հագան և սանդուխտի վե-

բայ բարձրացան: Այն բոսէին երր նրանք պատռւ-  
հանը բաց արին՝ կայծակը նրա միջով Բրունէին  
այնպէս խփեց որ հաղեւ թէ աղաղուեցաւ մահից:  
Երկրորդ անգամ նրանք պատռհանի նեղ ծակից  
անցնելով իջան ապահակամածը: Քամին և ալիքները  
այնպէս կատաղել էին, որ քիչ էր մնացել նրանց  
ծովը ձգէին եթէ նոքա չամրանային թոկի վերայ:  
Ծովը եփ էր գալիս: Հորիզոնը չըր երևում Յա ա-  
մենադարհուրելի փոթորիկներից մէին էր, որ սովո-  
րական է ձապոնեայի ափերում Տիֆօն կամ Տրօմբա  
անունով: Պետրոսի կողքին պարկած էր մի ծեր նա-  
ւաստի:

— Ո՞ւ, Աստուած իմ, ասում էր նա, ողորմիր ու  
պահանիր կնոջս և երեխաներիս:

Բրունէն շշմած ընկաւ Պետրոսի վերայ, որը  
տարաւ նրան նաւասենեակը, մի շիշ կոնեակ դտաւ  
և տուեց, որ մի քանի կաթիլ խմի: Յանկարծ մի  
զարհուրելի ճայթին (զարկ) լսուեցաւ: Նրանք մեր  
բարձրացան: Մըրիկը քանի գնում էր սաստկանում  
էր: Կայմը արգէն կոտրուած էր և նրա փրայի թո-  
կերն էլ նոյն բոպէին կորտուեցան: Անբաղդ նաւա-  
պետը աեմնելով ղէկի ալիքներից խորտակուիլը մա-  
զերը պրկում և յուսահատութեամբ երկինքն էր նա-  
յում: Ծերունի նաւաստին աղօթում էր: Մնացած  
ներից մի քանիսը ուշաթափուած ընկան գետինը,  
մի քանիսներն էլ օդու շիշը քաշում էին գրաւխները,

որպէս ղե մի քանի վայրկեան էլ է մոռանան այդ  
զարհուրել գրութիւնը:

Տախտակամածը կարծես գողգողում էր Բրունէի  
և Պետրոսի ոտքերի տակ. լսուեցաւ մի սարսափելի  
ճայթին: Բրունէն և Պետրոսը տեսան իրանց առաջ  
կատաղած ծովը և նաւի միւս կէսը նաւապետի հետ,  
որը մի քանի րոպէ օրօրուելուց յետոյ, շուռ եկաւ  
կողքի վերայ և անյայտացաւ անլերջ խորութեան  
մէջ: Պետրոսը գրկեց Բրունէին, որ միասին խեղ-  
դուեն: Այդ րոպէին սաստիկ քամին նրանց վերցրեց  
ու ձգեց ծովը:

Տիֆօնը ինչպէս շուտով յարձակվում է, նոյն-  
պէս և շուտով հանդարտուամ է. մի րոպէից յետ  
ծովը խաղաղացաւ և ալիքները այնպէս անյայտացան,  
որ կարծես ոչինչ չէր պատահէլ:

Ալիքները երկու բարեկամներին մակերեւոյթը  
ձգեցին և նրանք միմեանց զրկած՝ բոլոր ուժով բա-  
ւականի ժամանակ լողում էին, երբ վերջապէս պա-  
տահեցան մի մակոյիկի: Պետրոսը խկոյն կախուելով  
նրանից ներս մոռաւ և Բրունէին էլ ներս քաշեց, որը  
համարեա ուշաթափուածի նման էր եղել ջրի մէջ:  
Բարեկամները շատ ուրախացան, որ գոնեա մի այն-  
պիսի կոտրտուած մակոյիկի էլ է պատահեցին. բայց  
թէ ինչպէս և ուր կ'հասնեն նոքա առանց ղէկի և  
թիակի այդ Աստուած գիտէ թէ նրանց ուր կ'տանէ  
նոր հանդարտուած ծովը:

Պարոն Մատոն, ասաց Պետրոսը կոմիլիցութեամբ  
նայելով դունառուած և թուլացած Բրունէին, ինչ-  
պէս տեսնում եմի, վտանգից գեռ չենք աղասուել և  
շատ կարելի է այժմ աւելի վտանգաւոր է, քան նմ  
աշտարակում լինելու, բայց Տէր Աստուածը ողբրմած է,  
Նա, որ թոյլ չտուեց մեղ նրանց հետ կորչել այժմ  
ևս կ'աղատիր. Աղօթենք Բրունէ և շնորհակալութիւն  
տանք Աստուածոյ մեր աղատութեան համար:

Ըստակէս խօսելոց յետոյ նրանք սկսեցին մեղմ  
կերպով աղօթք աննէլ:

Ենցաւ մի քանի ժամ—քաղցր ու ծարսուր  
սկսեց նրանց նեղացնել արդէն երկու օր էր, որ նը-  
րանք ոչինչ էին կերած Սակայն երեկոյացաւ և մոլ-  
թը կոխեց: Բրունէն չկամեցաւ քնիլ և մէնակ թող-  
նել Պետրոսին, բայց նա այնքան թուլացել էր, որ  
տկարութիւնից ընկաւ: Պետրոսը վերցրեց նրան, դրաւ  
իւր ծնկան վերայ և մօր պէս արթուր մնումէր, որ  
հանգիստ քնի:

Եհա և կիս զիշերը: Յանձարծ Պետրոսը զգաց,  
որ կարծես մակոյկը բունուեցաւ սաստիկ հոսանքից  
և սկսեց աւելի արագ լողալ: «Այս ի՞նչ է, մի թէ  
շների ձայն եմ լսում.» մտածում էր նա: Կասկածելու  
տեղ չկար: Արշալոյմը բացուեցաւ և Պետրոսը պարզ  
տեսաւ ափը, ուր շուտով քշեց մակոյկը: Նա շնոր-  
հակալութիւն տուաւ Աստուածոյ և ուրախութիւնից  
արտասուեց:

— Երթնացիր Բրունէ, աղաղակեց Պետրոսը ուրա-  
խութեամբ, երկիր, երկիր:

— Եյ զարմանալի երկիր, աղաղակեց Բրունէն,  
զգուշութեամբ բարձրանալով: Ահա երազս կատա-  
րուեցաւ, որովհետեւ երազում նրան աեմում էի.  
ոչ ի՞նչ բաղդ է, ի՞նչ ուրախութիւն:

Եհա բոլորովին մօտեցան ափին: Բարեկամները  
չեն իմանում թէ ինչ կ'պատահի իրանց հետ, կը-  
համանի՞ն արդեօք ափին թէ կ'ման ճահճնում: Յան-  
կարծ մակոյկը կանգնեց: Պետրոսը նայեց և շատ ու-  
րախացաւ երբ տեսուր, որ մակոյկից մինչև ափը ա-  
ւագոտ տարածութիւնէ ծածկուած կէս արջին ջորի:

Պետրոսը և Բրունէն դուրս թռան մակոյկից  
և գնացին ափը: Մի քանի բոպէից յետ նրանք  
չոքելով նորհակառութիւն տուին Աստուածոյ, այն  
զարհուրելի վտանգից աղատուելու համար: Այդ  
միջոցին փայլեց արեգակը և իւր պայծառ ճառա-  
գայթներով ուրախութեամբ լուսաւորեց ծովը և  
ցամաքը:

Եաւթանգաղ իոյժանի՝ զայցը զնայլ՝  
ծառափաց (աղջ) անձ մի անձուցաց զառա բանյը

— Ափը Պարոն Մատոն, ասաց Պետրոսը, մենք չենք  
կարող երկար մնալ այստեղ: Հանեցէք ձեր շորերը և  
ցամաքեցնենք արեգակի տակը և ապա ուր գնաներս  
շուտով վճռենք. ես շատ քաղցած ու ծարաւ եմ:

— Խնդրեմ Պետրոս, որ ինձ էլ Պարոն Մատոն

չկանչես: Դու իմ բարեկամն և աղտօնիս ես, ուստի պարզ Բրունէ: Դմացիր, որ առանց քեզ՝ ծովային հրէշների կերակուր եղած կլինէի:

— Դէհ, լաւ, սրանից յետոյ ես քեզ կ'կանչեմ պարզ Բրունէ, միայն այն պայմանով, որ ինձ երեքք քո աղտօնիչը չանուամնես: Խնչ աղնիւ մարդ որ լինէր իմ տեղս՝ միւնյոնը կանէր: Աւելի լաւ է ասացէք, արդեօք ճանաչնումէք այս երկիրը թէ ոչ: Դէհ շուտ պատասխանիր, ես շատ մրտում եմ: ասա թէ ուր պէտք է գնանք:

— Այս դու անբաղդ, խղճալի ձայնով ասաց Բրունէն, ամբողջ գիշերներ արթնութեամբ հսկել ես իմ վերայ և բոլոր ժամանակն էլ ինձ քո ծնկադ վերան էիր պաշել: Գնանք վագէվազ որ տաքանանք: կարծեմ նիփօն կղզումն ենք, եթէ կարծիքս ճշմարիտ լինի, շուտով մի որ և իցէ խրճիռում մենք հիւր կը լինինք: Վաղնաք այս նեղ ճանապարհով դէսի այն բլուրը և այն տեղից տեսնենք թէ ուր պէտք է գնանք:

Կրանք երկար չմտածելով բարձրացան բլուրը: Նրանց առաջ բացուեցաւ մի խիտ (սըխ) բնակուած կղզու ընդարձակ հորիզոն:

— Կայիր, Պետրոս, ահա Փուղի—Լաման: Ո՛հ, այս ինչ բարդ է, որ մեզ բերեց նիփօն և ոչ օտար երկիր կամ մի անմարդաբնակ կղզի:

Պետրոսը ուրախութիւնից յափշտակուած էր. նրա բերանից միայն ուրախ ձայներ էին լսվում:

Կրանց առաջ բացուեցաւ մի գարմանալի գեղեցիկ զիբքով դաշտավայր: Ամբողջ կղզին նմանեռմ էր մի անտառով ծածկուած գաշտի, կարառուած՝ բլուրներով, ձորերով, փայլուն, հսուլ ջընդէցներով և առուակներով: Բրինձի դաշտերը ձգվում էին երկար շերտերով: Կղզու ամենայն կողմում երեսում էր մարդկանց աշխատութիւնը: Ամենայն տեղ թէ թփերի մէջ և թէ ձունքում երեսում էին զիւզեր և փոքրիկ քաղաքներ, որոնք հեղութեամբ իւրեանց գլուխները բարձրացնում էին դաշտավայրներից: Հեռու ձգվում էր բարձր սարերի շխման, իսկ նրանց միջեց հպարտութեամբ բարձրանում էր Փուղի—Լաման:

Բարեկամները մի քանի ըսպէ զմայլելով դաշտավայրի գեղեցկութեան վերայ, սկսեցին բլուրից իջնել: Ահա կամելքայի, լեզակի և եղնանեայի աշհագին անտառների միջեց փայլեցին տների եղէդնեայ (ղամիշ): տանիքները: Բրունէն և Պետրոսը ուրախ այս քաշեցին: Նրանք այնքան թուլացել էին, որ շատ չնորհակալ կլինէին գոնէ մի տեղ դանէին, որ մի քիչ հանգատանան: Նրանք գուրս եկան բամբուների թփերից և մի փոքր առաջ գնալով աեսան ամբողջ զիւզը: Ամենավելջին խրճիթը իջեան էր: Մի մեծ հարթ տարածութեան վերայ ժողովուած էին հաւեր, բագեր, լսկուներ (փոքրիկ շներ) և կատուներ: Այնտեղ լուացւում էին ճապոնացիները: Կըրաքանչիւրը պարզ առուակից հանած ջրով, առաջ

լուանում՝ էր ձեռները, երեսը, պարսնոցը (վիզ) ուները և ապա գլխից մինչև ուղը ջուր էր սրսկում իւր վերայ: Երեխայքը փոխանակ ցուրտ ջրի տաքով էին լուացւում: Ճապնացիք չափազանց մաքարասէր ժողովուրդ են, այնպէս որ ոչ մի ճապնացի չի կարելի տեսնել կեխտու չորերով:

Բրունէն բոլորովին մօտենայով ճապնացինեւրին՝ բարձր ձայնով ասայ: Օդէյեօ (նշանակում է «բարի լոյս»):

Այս օտար մարդու ձայնից երեխայքը, կաշնայքը, հաւերը, բաղերը, ձղալով, աղաղակերով փախան զանազան կողմեր: Տէրը վերաբրկուն ուսը գթելով դուրս եկաւ ներոպացւոց առաջ:

— Արմատօ Օդէյեօ (շնորհակալ եմ ձեր բարի լուսին) քաղաքավարութեամբ և քաղցրութեամբ ասաց նու:

Ճապնացին գեռ երբէք ներոպացու երես չէր տեսած, բայց նրանց մասին շատ առակներ էր լսել և առած էր նրանց պատկերները: Բրունէին և Պետրոսին տեսածին պէս իսկոյն ճանաչեց որ նրանք ներոպացիք են՝ և թէ նաւարեկութիւնից են ազատուել Այս վերջինը նա դուշակեց նրանց տիտրդէմքից և բայցի դրամնից հաստատ դիտէր, որ նրան եկած ճանապարհին ոչ մի նաւահանգիստ չկար: Նա ուրախութեամբ և բարեկամարար ձեռք բռնեց և հրաւիրեց իւր տունը: Ճապնացիք Զինացոց պէս

միշտ զանազան նշաններով են խօսում, ուստի՝ լեզու չխացող մարդը հեշտութեամբ կհասկանայ նրանց ասածը: Աչս այս կերպով այսինքն զանազան ձեւերով բրունէն պատմեց իրա շրջապատճեներին բոլոր իրանց գլխից անցածները: Կանայքը զարհութեալով ձեռները խփում էին ուսներին և պրում էին արտասուքը: Երբ բրունէն վերջացընց իւր սրաաշարժ պատմութիւնը նրան և Պետրոսին պատուով տարան ամենամեծ խթճիթը, որ շինուած էր բարեսւկի եղէզից և հաստ գերաններից: Նա չունէր ոչ դուռ և ոչ պատուհան: Խրճիթը վերանդայի ձև ունէր սիւների միջի տարածութիւնը ծածկուտծ էր միմեանց հաւասար շարժական և զէզներով կամ թէ նկարուած մատաներով (վերմակի նման չըլ է): Սատաքը դռների համար է գործածուում, իսկ մնացածները պատերի և պատուհանների:

Երբ բարեկամները մտան լայն սենեակը, Պետրոսը իւր գէմքը ծռմռեց. սենեակում չկար ոչ առթու, ոչ սեղան, նրանց փոխանակ փուռած էին յատակի վերայ զորդեր (կարտետ): Տէրը իսկոյն նախաձաշեկ տուեց հիւրերին, այն է, կիած բրինձ և թէյ. բացի գորանից հիւրերին պատռեցին ձուկով, ձուով և սակով (բրինձից պատրաստուած օվի):

Բարեկամների առջեր զրին ներկած ամռուներ, որոնց վերայ կային յախճապակեայ (չինիով շինած) ամռնների մէջ կերտկուրներ: Փոխանակ դանակ չանկալի նրանց առջեր դրին ելկու փայտ:

Բարունէն նրանց գործածելու կերպը շուտով իւմացաւ բայց Պետրոսի գլուխը դուրս չեկաւ զրանից, ուստի ստիպուած բոլորը ձեռովկ կերաւ։ Նա շուտով սրբելով իւր ամանը սկսեց նայել ճապոնացիներին, որոնք գլուխները քաշ զցած, այն փայտերով արաւ գութեամբ բրինձը բերաններն էին գցում։ Պետրոսը չը կարողանում իւր ծիծաղը պահել երբ հայեացքը ձգում էր ճապոնացիների վերայ. Նրանք ձկան երկար թևերը անցրած գլուխը, փայտեայ հողաթափները թոկերով ամրացրած ոտերին, երկար և լայն շորերի մէջ փաթաթուած պարկեշտութեամբ նստած կամ ուտում էին բրինձ կամ ծխում էին երկաթէ կարծ ծխաքարշներով։ Պետրոսը այլ ևս չ'կարողացաւ համբերել և բարձր ծիծաղեց։ Ճապոնացիք մինչեւ այդ ժամանակ ամեննեին չեին ծիծաղել, թէև նրանց ծիծաղելի էր թւում, որ Պետրոսը չը կարողանում փայտերով ուտել։

Պետրոսը մօտենալով տանտիրով ցոյց տուեց ծխաքարշը (մունշտիկ)։ Խսկոյն երկու ծխաքարշ բերին և մեծարեցին երկուսին էլ։

Մի քանի ըոսկէից յետ Պետրոսը հասկացրեց, որ սաստիկ յօգնած են և կամենում են քնել։ Ամենքը գուրս եկան սենեակից՝ թողնելով միայն երկուսին։ Անկոլոյ տեղ նրանց ցոյց տուին մատաներ, իսկ բարձերի տեղ մի փայտէ արկղ ուր ճապոնացիք պահում էին իրանց բոլոր զարգերը։

— Այս ինչ վատ տեղ է, ասայ Պետրոսը, մեռնեմ էլ գլուխս չեմ դնիլ այս ամօւր առարկայի վերայ, աւելի լաւ է վերցնեմ մի մատա մեր երկուսի գլխի տակ զնելու համար։

Չ'նայիլով անհանգիստ ան՛ողնուն, երկուսն էլ մինչեւ արեգակի դուրս գալը սինդ քնեցին։ Երբ նըրանք արթնացան ճաշ խնդրեցին։ Եարի ճապոնուհին խսկոյն ճաշ տուեց. այն է տաք թէյ. և բրինձից պատրաստուած խմոր։ Արդէն ուշ էր, ուստի վճռեցին սպասել մինչեւ միւս առաւօտը։ Նրանք, մի երեխայի առաջնորդութեամբ, զնացին մանգալու դաշտերը և այգիները և ապա ծարկանոցը։ Նրանք այնպէս զմայլեցան անուշահառ, գեղեցիկ, գոյնզգոյն ծաղկիների վերայ, որ չեին կամենում նրանցից հեռանալ։ Այնտեղց գնացին բանջարանոցը, ուր բուսած էին ամենայն տեսակ բանջարներ, և այնտեղեց բրինձի դաշտը։ Ճապոնացիք դեռ աշխատում էին. Նրանք տեղափոխում էին բրինձի բոյսերը մերձակայ ածուներից՝ դաշտը։ Բրինձի դաշտերում տարածուած էին փոքրիկ առուներ, որոնցով ճապոնացիք ջըռում էին իրանց դաշտերը։

Երբ բարեկամները տուն վերադարձան, դռան առաջ տեսան բազմաթիւ ճապոնացիք, որոնք եկած էին Եւրոպացիներին տեսնելու։ Ամենքը հանդիպելիս, քաղաքավարութեամբ և մեծ յարգանքով բարեւում էին։

Յանկարծ մէկը բրունէին գցեց մի ճապոնացու  
վերայ:

— Ա մեր Տօն է, մեր Բէտօն, աղաղակեց Ճապո-  
նացին Պետրոսին:

Զգողը արդէն անցայտացել էր:

— Այս ինչ բան է, առումէր բրունէն ինքն իրան,  
արդեօք ի՞նչ է պատահել նրան:

Նա Տօն մասին հարցրեց Ճապոնացիներին,  
բայց ոչ ոք չէր ճանաչում նրան:

Կէս գիշերին, երբ բարեկամները խոր քուն էին  
մաած, տանտէրը շաապալ մուաւ խրձիթը: «Ճեր դէմ  
գանդատուել են, ասաց նա մտնելով սենեակը և մի-  
ւնցն ժամանակ ներողութիւն խնդրելով նրանց ան-  
հանգստացնելու համար, ձեզ կամենում են սպանել.  
փախէք շուտով այստեղից և աղատեցէք ձեր կեանքը.  
Ես երեկոյեան իմացայ և իսկօյն յայտնեցի ոստիկա-  
նութեան: Նրանք շուտով այստեղ կլինին: Ահա ձեր  
գլխարկները և ահա խմոր ու ձուկ ճանապարհի հա-  
մար: Բայցի դրանից Ճապոնացին տուեց իւրաքան-  
չերին մի մի փայտ և ցցց տուեց Խեղդոսի ճանա-  
պարհը:

Բրունէն կամենում էր նրան ոսկի տալ, որը  
ծրարուած լինելով կողքի գրապանում, չէր ընկել ծովը,  
բայց Ճապոնացին ոչինչ չառաւ Երբուացիներից, միայն  
շտապեցնում և ներողութիւն էր խնդրում նրանց արթ-  
նացնելու համար: Բարեկամները շնորհակարութիւն  
արին բարի տանտիրոջը և ճանապարհ ընկան:

Խորանանելոյն ցո ով այս այլաւ ո այս  
ով սմբ միջազգայաց պամաւն և պայտ վաստակաւ  
ու Հրաժարուելիս թէւ տանտէրը առեել էր նրանց  
Նիֆօնի աշխարհացոյցը, բայց այնպէս խառն ու  
մութ էր, որ ոչ մի բան չէր հասկացւում: Նրանք  
զնում էին Խեղդոսի ճանապարհով, բայց շփաթուե-  
լով իրար կտրող անմթիւ ծուռը ու մօւռ ճանապարհ-  
ներից, մոլորու եցան ահազին անտառում, ուստի և  
ստիպուեցան սպասել արեգակի ծագերում: Նրանք վա-  
խնում էին քնելու, բայց անտառի փափուկ մամառտ  
տեղերը, նրանց այնպէս գրաւեցին հանդատանալ իւ-  
րանց վերայ և նրանք այս վերջին օրեւս այնքան յոդ-  
նած էին, որ իրանք էլ չխմացան թէ ինչպէս խոր  
քուն մտան: Նրանց վերայ կախ էր ընկած կամելեա-  
նեցի Ճիւղերը, անմթիւ կարմիր ու սպիտակ ծաղիկ-  
ների թփերը, որոնք ժպտելով նայում և քամու մի  
թեթեւ տատանումից խերեանց թերթիկներով զավաց-  
նում էին նշանց: Մի փոքր հեռու կանգնած էին  
գեղեցկատեսիլ եղենիները, ու ոնց մօտ բուսած էին  
մրտենւոյ տունիերը և մըրենիքը (մուշի ծառ) իւր-  
եանց հիւժալի կարմիր պատուղներով: Մերձակայ ժայռի  
վերոյ կանգնած էին երկու արմաւենի և մի քանի սոճեր  
(չամի ծառ). իսկ այն խոր անդնդում ուր քչքչում  
էր անտառի հեղեղը և ուր փայլում էր առաւօտեան  
արշալուսին լիճը, բուսած էին ուռենւոյ թփեր, բամ-  
բուկէ եղէզն և խիտ ու շքեղ մայրի ծառեր:

Լոյսը բացուելու վերայ էր, որ արթնանալով  
անտառի բոլոր թռչունները՝ բարձրացրին պէս պէս  
քաղցր ձայներ, երգեր ու աղաղակներ, այնպէս որ  
ողջ անտառը կարծես կենդանացել էր երկարատե-  
քնից: Թութակները ամրող երամներով թռչուտա-  
լով ծառից ծառ, երգում էին կամ ծաղրում մի ու-  
րիշ երգով թռչունի երգը: Ասպիկները Ճիւղերից  
կախուած աղաղտկում էին: Նրանց և ամենայն տեսակ  
թռչունների ձայները, միմեանց հետ խառնուելով մի  
գեղեցիկ խառնաշփոթ տեսարան էր ներկայացնում: Փասեանն  
էլ ծառից ծառ էր թռչուտամբաց անե-  
լով իւր նախշուն թեները և ազին, որ ծածանուելով  
օդի մէջ փայլում էր ինչպէս ոսկի: Խոկ ծապոնական  
կապոյտ արագիլը բարձրանում էր թփերից՝ բազմու-  
թեանը ներկայ գանուելու: Ալեքակը բարձրանում էր  
բարձր ու բարձր: Յանկարծ Պետրոսը մի աղաղակ  
լսեց և շուռ գալով Բրունէի կողմը տեսաւ որ մամժի  
վերայ նստած՝ նա կրվում է երկու ծապոնացու հետ:  
Պետրոսը քաջութեանք յարձակուեցաւ նրանց վերայ  
և փայտի մի սաստիկ հարուածով զլորեց առաջն  
ծապոնացուն, խոկ միւսին այնպէս հրեց, որ նա գլո-  
րուելով անյայտացաւ խորը անդունդի մէջ: ծապոնա-  
ցիներից մէկը իւր դանակով մի փօքր քերծած  
(տաշած) էր Բրունէի այտը, բայց շատ թեթեւ, եթէ  
գանակը նորա կամքով մարտւէր, Բրունէի կեանքը  
արդէն վերջացած կլինէր: Բրունէն զրկեց Պետրոսին:

անուանելավնրան իւր ակատիչ Նրանք շարունակեցին  
իւրեանց ճանապարհը կարծելով որ վտանգից արդէն  
աղատուել են: Բայց չանցած մի կէս վերստ—ահա աե-  
սան, որ իրանց ետեկից վագում են երկու ծապոնացի  
և նոցա ետեկիցն էլ երկուսը, ջրան էլ ընկան  
Եղողացիների վերայ, բայց այն բովէին լսուեցաւ  
ձիանց ստների և ուրախ խրին ջալու ձայնը: Սրանք  
Լոկանացի ստիկաններ էին, որ ուղարկուած էին իջև-  
անի տիրոջից օդնութիւն: Հէնց աւազակները տեսան  
ձիանց գոնչը թէ չէ, մէկ փախան: Լոկանացիք և եր-  
կու բարեկամները ընկան նոցա ետեկից: Բայց չհասան,  
որովհետեւ աւազակները արդէն բաւականին անցել  
էին: Երբ ձիաւորները հասան սարի զլուկը տեսան  
որ աւազակները, մակունդի վրայի կախուած հաստ  
թոկով, անցնում էին միւս ծայրը և երբ անցան այն-  
տեղ՝ կորեցին թոկը: Այսպէս աւազակների և ոստի-  
կանների մէջ մնաց մի անանցանելի ճանապարհ: Աւա-  
զակները կամաց կամաց դուրս եկան անգունդից և  
անցայտացան մութ անտառի խորքում: Յրունէն ջատ  
ափսոսաց որ նրանց չ'քանեցին, որովհէտեւ նա կար-  
ծում էր, որ նրանցից մէկը ծօն էր, բայց բանը բա-  
նից անց էր կացել պէսք էր յետ գտնային:  
